ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅՈՒԹԵԼԵԱՆ ՀԱՅԿԱԶՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵՍՆ ԼԵՒՈՆԻ ԵՐԵՔՑԱՍԱՆԵՐՈՐԴԻ (Պատկերաւ Լեւոն Ժ.ի.)

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — Հետազօտութիւնք Նախնեաց ռամկօրէնին վրայ:
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Պր. Ամնտա Շավայէբ-Լերբենֆէլտ եւ Երկիր Հայոց:
ԳՐԱԿԱՆ — Ռուսահայոց Գրականութիւնը, Գ. Ռուսահայոց գրական լեզուն:

ԲՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ — Գործնական Տնտեսագիտութիւն:

ՔՐՈՆԱԿԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐԱՎԷՊ — Գաւեսիլեա:

ԲԱԼԵՒՈՅԼՔ
ՆՈՐԱԼՈՒՐՔ — ՏՆՏԵՍԱԿԱՆ — ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

ՔԱՂԵՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՍՄԱՐՄԵԱՆՔ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՔ ՆԱԽՆԵԱՑ ՌԱՄԿՕՐԷՆԻՆ ՎՐԱՅ

Հայերէն գրութիւնք լեզուի նկատմամբ՝ երեք այլեւայլ կերպարանքք կ'ելլեն մեր առջեւ, որ են՝ Գրաբարն, Նախնեաց ռամկօրէնն, եւ այժմու Գաւառականքն՝ յորոց երկուք միայն գրաւոր են, այն է Ցամաքահայոցս (արեւմտեան) եւ Ռուսահայոց (արեւելեան) բարբառք: Շատ մատենագիրք բազմաթիւ գրուածովք զանազան տեսակէտներէ գրաված են առաջնոյն, ոչ սակաւք իրենց աշխատասիրութեանց նիւթ դրած են երրորդէն՝ Ցամաքահայոց բարբառն, զոր ի վերջին ժամանակս Արդի գրաւոր լեզու կը կոչենք: Իսկ երկրորդն կամ՝ Նախնեաց ռամկօրէնն, թէպէտ յընդհանուրն այլեւայլ քննութեանց եւ խորհրդածութեանց նիւթ եղած է ըստ բաւականին, սակայն ոչ այնչափ մանրամասն՝ որչափ նիւթոյն կարեւորութիւնը կ'արժէ: Բայց յայսմ մասին զարմանալին է՝ շատերուն եւ բանասիրաց իսկ իբր խուտան ինչ եւ անպիտան նկատելը, մանաւանդ թէ արհամարհանք եւ ծուռ աչք նայիլը:

Ոչ այլ ինչ մեկնութիւն կարող ենք գտնել այս երեւութին, եթէ ոչ՝ ըսել թէ գլխաւոր եւ գուցէ միակ պատճառն է իր միջինդարեան նկարագիրն, որով ի հարկէ հաղորդ գտնուելու էր բախտի ամենայնի՝ որ ինչ միջինդարեան է: — Գաւառական հնութեան սիրողք կ'արհամարհեն յամենայնի զմիջինդարեան, վասն զի զուրկ է իրենց աշուին շլացնող շողուն պայծառութենէն՝ զոր իրք ունի դասական հնութիւն. կ'արհամարհեն նոյնպէս նորութեանց սիրահարեալք, որովհետեւ տարբեր է իրենց վարժածէն եւ հաճոյականէն:

Այսպէս է ճշդիւ նկատմամբ առաջարկեալ նիւթոյս. եւ յայսմ մասին կատարելապէս կը միաբանին հնասէրք եւ նորասէրք, կամ՝ թէ ըսենք՝ գրաբարասէրք եւ աշխարհաբարասէրք: Առաջինք կ'արհամարհեն զՆախնեաց ռամկօրէնն, չտեսնելով անոր վրայ հին գրաւորին ճոխութիւնն ու վայելչութիւնն. արհամարհոտ աչքք կը նային նաեւ յետինք, չգտնելով ի նոսին իրենց ընտելականին զարգուութիւնն ու գիւրիմացութիւնը: — Բայց թէեւ զինչնինք ըստ մասին ինչ իրաւունք տալ երկու կողմանց եւս, սակայն կարծենք թէ իրաւամբք իսկ կարող ենք ըսել թէ երկուքն ալ կ'անիրաւին այնպիսի լեզուի, որ՝ թող զի ունի իւր յատուկ վայելչութիւնն, կարող է մեծ եւ օգտակար ծառայութիւն մատուցանել թէ գրաբարին եւ թէ մանաւանդ արդի լեզուին:

Ա՛ռ այժմ խօսքը՝ վերջնոյն նկատմամբ ունեցած օգտակարութեան ամփոփելով, ինչպէս կարող էինք արդի լեզուին կազմակերպութեան իւրաքանչիւր յեղաշրջութեան հասու լինել, եթէ առաջի աչաց չունենայինք Նախնեաց ռամկօրէնին դարէ ի դար փոփոխութիւններն: Ուստի՝ կարող էինք իմանալ այնչափ բառերու եւ ձեւերու ծագումն, որ օտար կամ՝ օտարացած են գրաբարէն եւ այնպէս սովորական արդի լեզուին, եթէ չգտնէինք զանոնք Նախնեաց ռամկօրէնին նաեւ սկզբնական գրութեանց մէջ: Եւ ո՞վ կրնայ շտեսնել թէ ինչպիսի առատ գանձարան է Նախնեաց ռամկօրէնը կարեւոր բառից՝ զոր չունի հին գրաւոր լեզուն. եւ միթէ փոքր շահ է արդի լեզուիս նոյնպիսեալ ամեցընել իւր բառից մթերքն՝ որ այնչափ պակասաւոր է: Վերջապէս արդեօք լաւագոյն չէ՞, ի գարման աղքատութեան ձեւոց եւ ասացուածոց այժմու բարբառոյս, փոխանակ օտար եւ մուրացածոյ գրերու դիմելու՝ հանել առնուլ մեր սեպհական յորդաբուղխ ակնաղբերէն, որ այնպէս ձեւաշատ է: — —

Բայց երկրիս երեսն ամենայն ինչ փոփոխութեան ներքեւ ինկած է: — Ինչպէս բաւական ժամանակէ ի վեր շատերն իրենց գաղափարը փոխած են միջին դարու նկատմամբ, մինչեւ յոմանս նախընթաց արհամարհանց յաջորդած է գարմանք եւ զմայլումն. նոյնպէս ի վերջին ժամանակս կը նշմարի ոչ փոքր փոփոխութիւն կարծեաց՝ զէթ առ ուսումնականս ազգիս՝ Նախնեաց ռամկօրէնին վրայ, թէեւ լոկ ի տեսականին: Պակաս ժամանակէ ի վեր ասոտ անդ ոմանք թէ գրով եւ թէ՝ բերանացի իրենց ցաւը կը յայտնեն նոյն նիւթոյն այնպէս մոռացեալ եւ լքեալ թողուելուն վրայ, բաղձանք ցուցընելով ուելի ուշագրութիւն եղած տեսնելու: Ուստի կարծենք ներկայ գրութեամս հաճոյական գործ գործել այսպիսեաց, մանաւանդ զի յուսանք այսու գրգիռ ըլլալ այլոց՝ իրենց գրաւոր գործունէութենէն մասն մի նուիրելու հայ գրականութեան այս ծիլին:

Ի սրտէ կը բաղձանք որ այս մեր յոյսն արդեսմբք ի գլուխ ելելով, հմտագոյնք քան զմեզ զբաղին սոյն նիւթով եւ հաճեն զուսումնականս, որք անշուշտ կը ցանկան եւ կը սպասեն ամենայն մասամբք եւ հիմնական գրութիւն մ՚ունենալ. ուր մենք կը ճանչնանք եւ կը խոստովանինք իսկ՝ թէ առաջիկայ աշխատասիրութիւնս բաւական չէ անոնց ակնկալութիւնը լիով կատարելու: Վասն զի միտք չունինք Նախնեաց ռամկօրէնին ոչ օրինաւոր Քերականութիւնն եւ ոչ լիակատար Գրագիտութիւնն յօրինելու. այլ այնչափ ինչ միայն պիտի ճառենք՝ որչափ հարկաւոր է ընդհանուր գաղափար ստանալու

digitised by A.R.A.R.@